ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ

(ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ – ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետություն
«Պետական հատվածի արդիականացման չորրորդ ծրագիր» (ՊՀԱԾ 4)
Վարկ No. 9338-ԱՄ

Առաջադրանքի անվանումը՝ Ներքին գործերի նախարարության, այդ թվում նաև վերջինիս ենթակա պետական մարմինների և կառուցվածքային ստորաբաժանումների ֆունկցիոնալ գնահատում

Հղում No. (համաձայն Գնումների Պլանի): PSMP4-CQS-1.3.2

Հայաստանի Հանրապետությունը (ՀՀ) Համաշխարհային Բանկից ֆինանսավորում է ստացել «Պետական հատվածի արդիականացման չորրորդ ծրագրի» (ՊՀԱԾ 4) իրականացման համար և նպատակ ունի օգտագործել այս միջոցների մի մասը խորհրդատվական ծառայությունների համար:

Խորհրդատվական ծառայությունների հիմնական նպատակն է իրականացնել Ներքին գործերի նախարարության (ՆԳՆ) ֆունկցիոնալ ուսումնասիրություն/գնահատում, ձևավորել ՆԳՆ-ի գործունեության հիմնական ուղղությունները, պարզաբանել կառավարման ներքին ընթացակարգերը և ուղղորդել բիզնես գործընթացները՝ ՆԳՆ-ի և վերջինիս ենթական պետական մարմինների միջև համագործակցության և գործունեության համար:

Խորհրդատուն պետք է իրականացնի ֆունկցիոնալ և բիզնես գործընթացների ուսումնասիրություն՝ ՆԳՆ-ի և վերջինիս ենթակա պետական մարմինների կառավարման ներքին ընթացակարգերի վերաբերյալ: Այս ուսումնասիրությունը պետք է իրականացվի հանրային կառավարման բարեփոխման շրջանակներում՝ կիրառելով ՀՀ կառավարության համար ընդունելի մեթոդաբանությունը: Խորհրդատուն նաև պետք է մշակի Մրցութային փաստաթղթի(երի) փաթեթ (օգտագործելով Համաշխարհային Բանկի ստանդարտ փաստաթղթերի ձևաչափը) ՆԳՆ-ի էլ. կառավարման պլատֆորմը մշակելու և ներդնելու համար:

Իրականացման ժամկետը՝ մոտ 8 ամիս:

Այս հանձնարարականն իրականացնելու համար նախատեսվում է վարձել խորհրդատվական ընկերություն (հետայսու՝ «Խորհրդատու»):

ՀՀ Վարչապետի աշխատակազմը հրավիրում է խորհրդատվական ընկերություններին (Խորհրդատուներ) Ծառայության մատուցման վերաբերյալ արտահայտելու իրենց հետաքրքրությունը: Հետաքրքրված Խորհրդատուները պետք է տրամադրեն տեղեկություններ՝ ցույց տալով, որ վերոնշյալ Ծառայությունների մատուցման համար իրենք ունեն պահանջվող որակավորումներ և համապատասխան փորձ:

Խորհրդատուի որակավորման պահանջները.

Խորհրդատուն պետք է բավարար ռեսուրսներ և կարողություն ունենա՝ աշխատանքի շրջանակն իրականացնելու համար: Մասնավորապես, Խորհրդատուն պետք է հետևյալ նվազագույն փորձն ունենա.

- Ֆունկցիոնալ գնահատման, վերլուծության և բիզնես գործընթացների նախագծման/ ձևավորման ոլորտում փորձ:
- Իրավական ակտերը վերլուծության փորձ:
- Պետական մարմիններին խորհրդատվական ծառայությունների մատուցման փորձ, ՆԳՆ-ի հետ աշխատանքային փորձը կդիտարկվի որպես առավելություն:
- Միջազգային զարգացման կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող ծրագրերի իրականացման փորձ:

Հիմնական փորձագետները/անձնակազմը չի գնահատվելու այս փուլում:

Ավելի կոնկրետ, Հետաքրքրվածության հայտը պետք է ներկայացնի հետևյալ տեղեկատվությունը.

- Հիմնական բիզնեսի և գործունեության տարիների մանրամասն նկարագիրը՝ ներառյալ մատուցված ծառայությունները, ավարտված ծրագրերը՝ նշելով իրականացման ժամկետները, հասցեները, կոնտակտային տվյալները և ընկերության հիմնական աշխատակազմի քանակը և այլն:

Հետաքրքրված խորհրդատուների ուշադրությունը հրավիրվում է 2020թ. նոյեմբերի ՀԲ գնումների կարգավորումները IPF վարկառուների համար (Գնումների ուղեցույց՝ չորրորդ հրապարակում) Բաժին III, պարագրաֆ 3.14, 3.16, և 3.17, որտեղ սահմանված է շահերի բախման վերաբերյալ Համաշխարհային բանկի քաղաքականությանը:

Խորհրդատուները՝ իրենց որակավորումը բարելավելու համար կարող են միավորվել այլ ընկերությունների հետ համատեղ ձեռնարկությունների տեսքով կամ որպես ենթախորհրդատուներ՝ հստակորեն նշելով միավորման ձևը: Համատեղ ձեռնարկության պարագայում բոլոր գործընկերները համատեղ և համապարտ պարտավորություն են կրում ամբողջ պայմանագրի իրականացման համար:

Խորհրդատվական ընկերության ընտրությունը կիրականացվի «Գնումների կանոնակարգեր»-ում սահմանված «Խորհրդատուների որակավորում ընտրության» մեթոդի ընթացակարգերի համաձայն:

Հանձնարարականի մանրամասն «Տեխնիկական առաջադրանք»-ը կարող եք ստանալ ներքոնշյալ հասցեով դիմելու դեպքում**:**

Հետաքրքրված թեկնածուները կարող են լրացուցիչ տեղեկատվություն ստանալ ներքոնշյալ հասցեով հետևյալ աշխատանքային ժամերին՝ 09:00-ից մինչ 18:00-ը:

Հետաքրքրվածության հայտերը պետք է գրավոր ձևով ներկայացվեն ներքոնշյալ հասցեով (անձամբ, փոստով կամ էլ-հասցեով) մինչև **2024թ. հուլիսի 4-ը, ժ. 18:00 (տեղական ժամանակով):**

պրն. Ահարոն Մկրտչյան
«Պետական հատվածի արդիականացման չորրորդ ծրագրի» (ՊՀԱԾ 4) ղեկավար
ՀՀ, ք. Երևան 0010, Հանրապետության Հրապարակ, Կառավարական Տուն 1 (1-ին հարկ, 115, 117 սենյակ)
հեռ.՝ **(+374 10) 515931**
էլ. Փոստ՝ info@psmp.am